Քաղվածք

ՎՃԻՌ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

04.06.2026□. **□. □□□□□**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Դ. ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «ԹՐԵՅԴ ՀԱՈՒԶ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00140872, պետական գրանցման համար՝ 264.110.847899, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Կոմիտաս պողոտա, շենք 25, 5) (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության (ՀՎՀՀ՝ 02882913, պետական գրանցման համար՝ 286. 184. 1289951 , հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փողոց, շենք 130)՝ ՀՀ ներքին գործերի նախարարության թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-70 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 22. 04. 2025թ.-ի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով «Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ին 16-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու և «Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՎՃՌԵՑ

1. «ԹՐԵՅԴ ՀԱՈՒԶ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարության թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-70 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 22□04□2025 թվականի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով «Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ին 16-րդ չափաբաժնի մասով հաղթող

ճանաչելու և «Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել՝

անավավեր ճանաչել ՀՀ ներքին գործերի նախարարության թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-70 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 22. 04☒2025 թվականի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով «ԹՐԵՅԴ ՀԱՈՒԶ» ՍՊԸ-ին 16-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու և «ԹՐԵՅԴ ՀԱՈՒԶ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.05.2025 թվականի թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովումը պահպանել մինչև վճռի կատարումը:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Դ. ՕՀԱՆՅԱՆ**

Ստորագրող
ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
29149205O4
2026-06-05 20:50:09 GMT+04:00
Հավաստված է ԷԿԱՀ-ի կողմից